«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Արժեքային համակարգի ձևավորումը 8-րդ դասարանի գրականության դասերին
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Էսթերա Ազոյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ստեփանավանի հ.3 հիմնական դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Ա. Ծատուրյան

Ստեփանավան 2022

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գ. Սունդուկյան – հատված <<Պեպոյից>>
3. .Ռաֆֆի- հատված <<Խենթից>>
4. Պետրոս Դուրյան
5. Մուրացան <<Հասարակաց որդեգիրը>>
6. Շիրվանզադե <<Արտիստը>>
7. Նար – Դոս <<Ես և նա>>
8. Հովհաննես Թումանյան
9. Ավ. Իսահակյան
10. Գրիգոր Զոհրապ
11. Դանիել Վարուժան
12. Միսաք Մեծարենց
13. Վահան Տերյան
14. Էռնեստ Հեմինգուեյ<<Ծերունին և ծովը>>
15. Եզրակացություն
16. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Կրթության պետական չափորոշչի կարևոր բաղադրիչն է արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ: Սա շատ կարևոր բաղադրիչ է, որովհետև անգամ շարքային քաղաքացին պետք է ունենա բարոյական և հոգևոր արժեքներ, որոնք էլ դառնալու են կյանքում նրա կատարած բոլոր քայլերի հիմքը:Մարդը հասարակական էակ է, իսկ շփումը մարդկանց միջև պայմանավորված է նրանց ոչ միայն գիտելիքներով, այլև հոգևոր և բարոյական արժեքներով, մարդուն ծնված օրից պետք է դաստիարակել ոչ միայն իբրև լավ զավակ ընտանիքի համար, ոչ միայն իբրև եզակի անհատ, այլև հասարակությանլիիրավ և պատասխանատու անդամ, որն ապրում է բոլորի համար, բոլորի շահերը հաշվի առնելով, բոլորի նկատմամբ պատասխանատվություն զգալով :Առաջնորդվենք Պարույր Սևակի խոսքերով.

<<Ապրել, ապրել, այնպես ապրել,Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:

Ապրել, ապրել, այնպես ապրել,Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը:

Ու թե հանկարծ անպետքություն քեզ համարես;

Թե ինքդ քեզ արհամարհես ու համառես,

Քեզ հետ վիճի, քեզ չզիջի, համբերատար քեզ հետ խոսի,

Հակառակում քեզ համոզի ինքը՝…հզոր Հանրությունը…>>

Պարզ ճշմարտություն է , որ մայրենի լեզվի միջոցով են բացվում գիտելիքի աշխարհի դռները, մայրենի լեզուն է օգնում կարդալու, սովորելու և հասկանալու նախնիների ավանդածը, ստեղծելու նորը: Նմանապես չանտեսենք <<Գրականություն>> առարկայի դերը , որ բացում է դռները մարդու հոգևոր աշխարհի, հնարավորություն է տալիս ճանաչելու մինչ այդ հայտնի և անհայտ զգացմունքները, հնարավորություն է տալիս ապրումակցելու, ցավակցելու, սովորելու ուրիշների սխալների միջոցով:<<Գրականության>> շնորհիվ է սովորողը ծանոթանում համաշխարհային մշակույթին, մարդկության հազարամյա կենսափորձին, նրա միջոցով է հնարավոր շարունակական

ինքնակատարելագործումը: Ջոզեֆ Ադիսոնն ասել է.<<Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի>>[ ]:Հիմնական դպրոցի դասընթացը կոչվում է ոչ թե <<Հայ գրականություն>>, այլ <<Գրականություն>>, որովհետև ընդգրկում է նյութեր նաև համաշխարհային գրականությունից, ճիշտ է, ցանկալի էր, որ դրանք ավելի շատ լինեին ,բայց եղածն էլ օգնում է երեխաներին կապել համաշխարհային գրականության մեծերին: Օգնության է գալիս նաև արտադասարանական ընթերցանության գործոնը, օգնում են նաև գրքի քննարկումները, որոնք ևս մեծ դեր են կատարում մարդ և քաղաքացի ձևավորելու պատասխանատու գործում:

:<<Գրականությունը>> իրականացնում է չափորոշչի ներկայացրած արժեքային համակարգի դաստիարակումը.

Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա) գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը.

բ) հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը.

գ) գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.

դ) գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.

ե) կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.

զ) կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.

է) գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.

ը) գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.

թ) հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

ժ) անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.

ժա) դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

ժբ) մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:/1-/

Կասեք, որ սրանով են զբաղվում նաև մյուս առարկանե՞րը:Իհարկե , այդպես է, բայց մեծագույն դերը կատարում է <<Գրականությունը>>, որովհետև նա է , որ սովորեցնում է սիրել, հավատալ, պայքարել, գործել և ուղղել սխալները, սովորել ուրիշների օրինակով, սովորել ուրիշների սխալների վրա, զգալ, տեսնել, լսել բարին ու գեղեցիկը, տարբերել վախկոտությունը և հերոսությունը, սերը և ատելությունը, վեհը և ստորը: Հասկանալ, թե ինչն է մարդուն մարդ դարձնում, ինչը՝ տմարդ: Մյուս առարկաների առաջնահերթ նպատակը նոր գիտելիքներ տալը և կարողունակություններ ձևավորելն է, իսկ գրականությունը դաստիարակում է բարոյականություն, մարդուն մարդ է դարձնում, կարծում եմ, որ ավելի լավ է ունենալ բարոյական արժեքներ , քան մեծ գիտելիքներ, որովհետև սարսափելի է պատկերացնել բարոյական արժեքներ չունեցող գիտնական, զինվոր, պետության ղեկավար, ուսուցիչ...Ֆիլմերում և գրքերում դրանք կոչվում են << չար հանճար>>:Բարոյական արժեքներ չունեցող մարդիկ առաջնորդվում են <<Նպատակն արդարացնում է միջոցները >> սկզբունքով, իսկ դա չի կարող լինել առողջ և առաջադեմ հասարակության հիմքը:Գրականությունը առավել ,քան մյուս առարկաները , զբաղվում է մարդու զգացմունքների դաստիարակությամբ

Ուսուցիչը, մանավանդ գրականության ուսուցիչը, նաև դերասան է, այն էլ՝ վարպետ դերասան, նա գրավում է, տանում է, առաջնորդում է աշակերտին դեպի

հույզերի խորհրդավոր աշխարհը, սովորեցնում է տեսնել աշխարհն ու կյանքը այլ մարդկանց աչքերով, սովորեցնում է ապրել ուրիշի վշտով և ուրախությամբ, սովորեցնում է մասնավորից գնալ դեպի ընդհանուրը և ընդհանուրից եզրահանգում անել մասնավորի համար:<<Գրականությունն>> է, որ դաստիարակում է քննադատական մտածողություն՝ գրողների և նրանց հերոսների արարքներին գնահատական տալ, որոնել և բերել փաստարկներ՝ իրենց տեսակետն ապացուցելու համար , մի պահ <<լինել ուրիշի շապիկով>>, մտածել ուրիշի նման, զգալ ուրիշի պես, բացատրել ուրիշի սխալը, չկրկնել այն:

Այս ամենը արվում է ոչ միանգամից, արվում է դաս առ դաս, օր առ օր, դասարան առ դասարան , որի արդյունքում ունենում ենք արժեքային համակարգի վերջնարդյունքը:

Գրականության ժամերին անփոխարինելի է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը. համակարգչային դասերը, ֆիլմերը/վավերագրական և գեղարվեստական/, սահիկաշարերը /իմ կամ աշակերտների կողմից պատրաստված/:Երգերի, դերասանական ասմունքի ունկնդրումը զարգացնում են երեխաներին, նրանց առջև բացում իմացության կախարդական դռները:Արտադասարանական միջոցառումները ՝ ասմունքի փառատոներ, գրական ցերեկույթներ, էքսկուրսիաները, մեծապես օգնում են հայրենիքը, նրա գրականությունը, պատմությունը սովորելուն , ճանաչելուն և արժևորելուն:Վերլուծական և ստեղծագործական շարադրությունները սովորեցնում են երեխաներին մտքերն արտահայտել գրավոր, առանձնացնել կարևորը երկրորդականից, ունենալ գեղեցիկ և հարուստ գրավոր խոսք:

Այս ամենն իրականացնելու համար ուսուցչին օգնության են գալիս բազմաթիվ մեթոդներ և հնարներ ՝ թե՛ ավանդական , թե՛ ինտերակտիվ, օգնության է գալիս մանկավարժի և մարդու կենսափորձը, ուսուցչի սերը իր գործի հանդեպ,սերը , հարգանքը և պահանջկոտությունը աշակերտի նկատմամբ. Ինչպես ասել է մեծ մանկավարժ Մակարենկոն .<<Իմհիմնականսկզբունքըմիշտեղելէ. որքանկարելիէմեծպահանջներկայացնելմարդուն, բայցմինչնույնժամանակ, որքանկարելիէմեծհարգանքունենալդեպինա...Չիկարելիշատպահանջելմարդուց, ումչեսհարգում>> [2]:

1. Գ. Սունդուկյան – հատված <<Պեպոյից>>

Նախորդ դասարաններում էլ երեխաներն արդեն սովորել են դերային ընթերցանությամբ յուրացնել դասը, բայց մինչ այդ նրանք գործեն ունեցել գրական արևելահայերենի հետ, իսկ այժմ նրանց առջև է թիֆլիսահայ բարբառը՝ իր բառային և քերականական առանձնահատկություններով: Նախքան հերոսների հոգեկան առանձնահատկություններին ծանոթանալը երեխաները պետք է հաղթահարեն լեզվական պատնեշը: Այստեղ է , որ նրանք պետք է սովորեն սիրել և գնահատել բարբառների առանձնահատկությունները, ընդունեն մայրենին ՝ իր բոլոր դրսևորումներով:Հատվածը հասկանալու և ճիշտ ընկալելու համար Սունդուկյանի կենսագրությունից բացի երեխաներին ծանոթացնում եմ նաև Թիֆլիսում տիրող բարքերին. Աղջիկը հոգս է հոր համար, որին ամուսնացնելիս պետք է օժիտ տալ, որքան աղջիկը գեղեցիկ է և մեծ օժիտով, այնքան ավելի մեծ է հաջող ամուսնության հավանականությունը:Այս ստեղծագործության միջոցով երեխաները իմանում են , թե որքան ոտնահարված են եղել կնոջ իրավունքներն անցյալում, ինչպես է կինը առք ու վաճառքի առարկա դարձել, երկու կանանց ճակատագրերի համեմատություն ենք անում. անօժիտ Էփեմիան ամուսնացել է տարիքով հայր սազացող Զիմզիմովի հետ և փորձում է օգտվել իր երիտասարդությունից ՝լավ ապրելու համար, Պեպոյի քույրը օժիտ ունի՝ Զիմզիմովին ի պահ տրված , բայց մուրհակի կորստի հետևանքով հայտնվել է մերժված /փեսացուից լքված, նշանը հետ վերցված/ կարգավիճակում: Այդ ժամանակներում դա մեծ անպատվություն էր. Աղջիկը դառնում է մատնացույցի և ծաղրի առարկա, ոչ մի լավ եղբայր այդպիսի բան թույլ չի տա:

Սա մի կարևոր առանձնահատկություն է ՝ սովորողների կողմից դիտարկվող: Մյուս կարևոր պահը դասակարգերի մտածողության տարբերությունն է , որին ծանոթանում են Պեպոյի և Զիմզիմովի բախման միջոցով: Համեմատելով Պեպոյին և Զիմզիմովին՝ երեխաները հասկանում են , որ հարազատների համար հոգ տանելը մարդկային է , երիտասարդ կնոջ պատճառով սեփական երեխային զրկելն ու անտեսելը՝ անմարդկային:Առաջին անգամ աշակերտները տալիս են հերոսների համեմատական բնութագիր, որը հետագայում ավագ դպրոցում կվերածվի լուրջ

վերլուծության: Արվում են քննադատական և վերլուծական մտածողության առաջին գիտակցված քայլերը: Դեռահասները սկսում են հասկանալ, որ հասարակությունն է մեզ թելադրում բարոյական նորմերը, մենակ մարդը դժվարանում է պայքարել հասարակության կարծրատիպերի դեմ:

Սովորողները սկսում են հասկանալ նաև դասակարգային տարբերությունները, դասակարգային մտածողության տարբերությունները, անդունդը հասարակության <<վերևում >>և <<ներքևում >>գտնվող կողմերի միջև:Այս գաղափարը հետո զարգացում կապրի Մուրացանի, Շիրվանզադեի, Նար – Դոսի ստեղծագործություններն անցնելիս:Վերլուծական մտածողության զարգացմանը նպաստում է նաև այն , որ երեխաները համեմատական են անցկացնում <<կնոջ կարգավիճակն անցյալում և հիմա >>թեմայով, նրանք փնտրում և գտնում են նյութեր այն մասին , թե երբվանից կնոջը թույլատրվեց ընտրություն կատարել ամուսնանալիս, մասնակցել քաղաքական և հասարակական կյանքին, ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ, ինչպիսին է կնոջ կարգավիճակն այսօր աշխարհում, մասնավորապես Հայաստանում:Դա օգնում է աղջիկների ինքնագնահատականի բարձրացմանը, տղաներն էլ հասկանում և կարևորում են կանանց դերն աշխարհում և իրենց կյանքում:Իհարկե, այստեղ ակնհայտ են դառնում մինչ այդ թաքնված ընտանեկան հարաբերությունները. Այն ընտանիքները, որտեղ կինը հարգված և արժևորված չէ , իրենց դրոշմն են դնում երեխաների վրա. կարծիքներ արտահայտելիս դա ակնհայտ է դառնում:

2. Ռաֆֆի- հատված <<Խենթից>>

Ռաֆֆու ամբողջ կյանքը, նրա ստեղծագործությունները դաստիարակիչ և վճռորոշ են հայրենասեր մարդ, հայ և քաղաքացի դաստիարակելու գործում:Հենց կենսագրությունից արդեն երեխաները հասկանում են հայրենիքը ճանաչելու և սիրելու կարևորությունը և՛ կյանքում, և՛ աշխատանքային գործունեության մեջ:

Նախ՝ նրանց բացատրվում է<< ծրագրային վեպ >> հասկացությունը և այն, թե ինչու է <<Խենթը>> ծրագրային վեպ, ինչ կարևոր դեր են խաղացել Ռաֆֆու ծրագրային վեպերը ազգային – ազատագրական պայքարի կայծեր վառելու և

բորբոքելու մեջ:Նախորդ ամռանն արդեն <<Խենթը>> հանձնարարվել է ամառային ընթերցանության համար: Իհարկե, բոլորը չեն կարդացել այն, բայց միշտ էլ գտնվում են մի քանիսը, որոնք ընդհանուր գծերով ներկայացնում են վեպի բովանդակությունը:Վարդանի , նրա ճակատագրի, գործունեության մասին տեղեկացված լինելով՝ երեխաները պատկերացնում են այդ օրերի Հայաստանը, գտնում և բերում են Վարդանի նախատիպի՝ Սամսոն Տեր- Պողոսյանի մասին նյութեր,Հայաստանի կարգավիճակի, ժողովրդի կենսավիճակի մասին նյութեր:

Այսպիսի մեծ արձակ հատվածների ուսուցման ժամանակ սովորաբար աշխատում եմ <<Շրջված դասարանի>> մեթոդով. Երեխաները դասարան են գալիս՝հատվածն ինքնուրույն կարդացած, այնուհետև սկսում ենք անհրաժեշտ հատվածների ընթերցումը, վերապատումը, հարցերի և առաջադրանքների միջոցով համեմատություն ենք անցկացնում հին և նոր Հայաստանների միջև: Երեխաները հայրենասիրության դաս են առնում Վարդանի շնորհիվ, Ռաֆֆին նրանց սովորեցնում է երազել և կառուցել արժանապատիվ հայրենիք, արժանապատիվ կյանք:Թեման լավ հասկանալուց հետո Տ-աձև աղյուսակով համեմատում ենք Ռաֆֆու երազած Հայաստանը մերօրյա Հայաստանի հետ: Տեսնում ենք , որ շատուշատ հարցերում Հայաստանն այսօր ավելի զարգացած է, բայց առողջ հասարակության հարցում հեռու է Ռաֆֆու երազած հայրենիքից: Երեխաները առաջարկություններ են անում, թե ինչը կփոխեին և ինչպես կփոխեին: Փորձում ենք առաջարկությունները երազանքի մակարդակից իջեցնել իրական դաշտ:

Այստեղ ևս կարևոր է երեխաներին օգնել՝տեսնելու պարսկական, քրդական, թուրքական հալածանքների ենթարկվող հայ հասարակության մեջ կնոջ անպաշտպանությունը:

Երեխաները հասկանում են , որ իրենք են կառուցելու պետության վաղվա օրը, մեծ է անհատի, առաջնորդի դերը երկրի քաղաքականության կայունացման գործում:Բոլոր ժամանակներում էլիտաները կատարել են ժողովրդին կազմակերպելու և առաջնորդելու գործը,վաղն էլ իրենք են դառնալու այս երկրի զինվորը և առաջնորդը, բժիշկը և շինարարը, ուսուցիչն ու ճարտարապետը:

Դասն ամփոփում ենք Կենսագրական բանաստեղծությամբ, բնութագրում ենք Վարդանին՝ իբրև մարդու և քաղաքացու, արժևորում ենք նրա հայրենասիրությունը, մարդկային վիշտն ու կորուստը, երազանքն առ Հայաստան:

Իբրև ամփոփում ,խորհուրդ եմ տալիս 8-րդ դասարանին և դասղեկին, որ այցելեն Էջմիածին , Սուրբ Գայանեի եկեղեցու բակում խոնարհում կազմակերպեն Խենթի և Մախլուտոյի շիրիմներին:Ինքս իմ դասղեկական դասարաններին միշտ տանում եմ այնտեղ. Երեխաները պիտի իմանան, որ հերոսները միայն գրքերի էջերում չեն, նրանք իրական են, իրական շիրիմներով, իսկ մինչև հերոսանալը նրանք մեր կողքին ապրող մարդիկ են, գուցե պահը գա , և պարզվի , որ իրենք էլ հերոսներ են՝ վաղվա սերունդներին ոգևորող:

Պետրոս Դուրյան

Շատ եմ կարևորում Պետրոս Դուրյանին հատկացված դասաժամերը. վաղամեռիկ Դուրյանը, նրա ապրելու մեծ տենչը, աշխարհն ու նրա գեղեցկությունն ընկալելու դուրյանական տեսանկյունը ևս մեծ խթան են երեխաների համար կյանքը արժևորելու և գնահատելու, Գեղեցիկը տեսնելու, սիրելիների կողքին գտնվելու ժամանակը գնահատելու, չչարանալու, մերձավորների հանդեպ բարությամբ լցվելու համար:

Դուրյանի <<Սիրել>>բանաստեղծությունը դեռահասներին սովորեցնում է սիրել, արևմտահայերենի պատնեշը հաջողությամբ հաղթահարելուց հետո բանաստեղծական պատկերը աշակերտներին սովորեցնում է, որ սերն անշոշափելի զգացմունք է. մինչև հասկանում ես սիրահարված լինելդ, արդեն հայտվում ես սիրո ծուղակում, երբ ճանաչում ես սիրելիիդ, հրաժեշտ ես տալիս մենակ կյանքին, աշխարհն ու բնությունը բացվում են քո առաջ նոր գեղեցկությամբ, նոր գույներով:

8-րդ դասարանում երեխաներն արդեն սիրահարվելու փորձ ունեն և պետք է հասկանան, որ սերը նվիրում է, նա այն լուսավոր կետն է կյանքում, որ մեզ ապրելու ուժ է տալիս, լուսավորում է մեր կյանքի ուղին, <<Սիրել >> և <<Դրժել >> բանաստեղծությունների համեմատությամբ երեխաները հասկանում են , թե ինչպես է աշխարհը փոխում իր գույներն ու ձևերը սիրելիս և մերժվելիս:

Սովորաբար արևմտահայ հեղինակների գործերն ուսումնասիրում ենք Եռամաս օրագիր մեթոդով .

Տեքստը բնագրով	Թարգմանություն արևելահայերենի	Մեկնաբանություն

1-ին ժամին խմբերով բառարանի օգնությամբ ուսումնասիրում ենք տեքստի բովանդակությունը, մեկնաբանում ենք հասկացածը , աշխատում ընթերցանության տեխնիկայի վրա, որովհետև գրական արևմտահայերենը հեշտ չի տրվում արևելահայերենի հետ խնդիր չունեցող աշակերտներին:Այնուհետև երեխաները կամ պետք է անգիր սովորեն, կամ պետք է վերապատմեն բանաստեղծությունները՝ սեփական մեկնաբանություններով:

<<Տրտունջք>> բանաստեղծությունը ևս դիտարկում ենք բանաստեղծի անձնական ողբերգության համադրմամբ:Նախ ՝ երեխաները կարդում և հասկանում են բանաստեղծության բովանդակությունը, այնուհետև քննարկում ենք, թե ինչու՞ է կոչվում <<տրտունջք>>, ի՞նչն է դարձել բողոքի պատճառը, ի՞նչ համեմատություններ, փոխաբերություններ , մակդիրներ է օգտագործել բանաստեղծն իր ապրումները պատկերելու համար, ինչու՞ է բողոքը վերածվում անեծքի և հիասթափության: Դուրյանի ապրումների միջոցով հասկանում ենք վաղաժամ մահվան դատապարտված անհատների դրաման: Սովորում ենք ապրումակցել Դուրյանին, ապա՝ նրա նման վաղաժամ մահվան դատապարտվածներին: Երեխաները հասկանում են , որ կյանքը վաղանցիկ է, կարևորն այն է , թե որքանով լիարժեք ես ապրում այն և ինչ ես թողնում քեզնից հետո:

Դասագրքում զետեղված է նաև <<Զոջում >>բանաստեղծությունը, որը ևս <<Տրտունջքը>> հասկանալու, քրիստոնյա մարդու տառապանքն ու կասկածանքը ըմբռնելու միջոց է :

<<Լճակ>> բանաստեղծությունը հոգեկան անդրադարձ կատարելու մի աննման օրինակ է, որը սովորեցնում է նայել հոգու խորքերը, հասկանալու տխրության և ուրախության պատճառները, զգույշ լինել մարդկանց մասին արտահայտվելիս, որ

պատահական խոսքերով հոգեկան տառապանքների պատճառ չդառնաս:Այն հրաշալի պատկեր- ապրում է, որ երեխաները սովորում են անգիր:

Եվ վերջապես `<<Իմ ցավը >> բանաստեղծությունը: Սա Դուրյանի հայրենասիրական քնարերգության պսակն է, որից երեխաները հասկանում են երիտասարդ մեռնող Դուրյանի ողջ նվիրումը հայրենիքին:Երիտասարդ մեռնելը, առանց սերը ճանաչելու մեռնելը, սև հողի տակ մոռացվելը, ոչինչ այնքան չի ցավեցնում բանաստեղծին , որքան <<խեղճ մարդկության մի չոր ճյուղի ` իր հայրենիքի համար առանց որևէ բան անելու, օգնելու մեռնելը>>:

Սովորաբար, կախված դասարանի ուժերից, ես կազմակերպում եմ ցերեկույթ կամ բաց դաս՝ նվիրված Դուրյանի ստեղծագործությանը և կյանքին, այսպես ավելի մեծ լսարանի են հասանելի դառնում վերոհիշյալ արժեքները:

Այսպիսով՝ Դուրյանին նվիրված դասաժամերին երեխաները սովորում են ապրումակցել, գնահատել պահը և ունեցածը, արժևորել կյանքը, աշխարհի գեղեցկությունը և հայրենիքը:

Մուրացան<<Հասարակացորդեգիրը>>

Մուրացանի կյանքը ևս անմոռաց նվիրում է և տառապանք, սրա օրինակով երեխաները հասկանում են , թե որքան կարևոր է կյանքում սիրած գործով զբաղվելը, որքան ժամանակ և ջանք կարող է խլել չսիրած աշխատանքը, ինչպես է մարդու կյանքը դառնացնում սխալ ընտրությունը , սիրելի մարդկանց դավաճանությունը:

<<Հասարակաց որդեգիրը>> ևս ծավալուն գործ է, դրա համար այն ևս անցնում ենք <<Շրջված դասարան>> մեթոդով. Նախապես հանձնարարվում է կարդալ հատվածն ամբողջությամբ, ապա դասարանում ընտրվի հատվածների ընթերցմամբ, մեկնաբանությամբ , վերլուծությամբ հասկանում և արժևորում ենք կարդացածը: Անպայման թեման կապում ենք հենց Մուրացանի կենսագրության հետ. չէ՞ որ <<Ռուզան >>դրամայի բեմադրությունից հետո նմանատիպ դեպք էր կատարվել նաև գրողի հետ: Ուրիշ զարգացում տալով իրադարձություններին՝ Մուրացանը սովորեցնում է, թե ինչ կարող է պատահել , եթե վստահեք հասարակության պահի տակ տրված խոստումներին, ինչ կարող է պատահել , եթե

մարդիկ չպահեն իրենց խոսքը: Համեմատում ենք Գևորգին և Մուրացանին Վենի դիագրամով, գտնում նմանությունները և տարբերությունները , այսուհետև հաջորդ դասերում ևս մենք դիագրամը կօգտագործենք հաճախակի, որովհետև հաջորդող գրական հերոսները իրենց սոցիալական վիճակով, ունեցած մարդկային հատկանիշներով ,արժեքային համակարգով ևճակատագրով նմանություններ ունեն:Այս և հաջորդ 2 թեմաներում կերպարների վերլուծություն ենք սովորում ՝ օգտագործելով Բյուելի Կերպարի վերլուծության գծագիրը[Տես՝4,120]:

Քանի որ սա նորություն է միջին դպրոցի աշակերտի համար, 1-ին անգամ աշխատում ենք բոլորով. գրում ենք և՞ գրատախտակին, և՞ տետրերում, երեխաները գտնում են անհրաժեշտ կարևորագույնը կերպարը վերլուծելու և բնութագրելու համար:Այն, ինչ իրենք դեռ չեն պատկերացնում, հուշում եմ ես:

Վերլուծության այս կերպը սովորեցնում է ուշադիր ընթերցել, ընթերցելիս ընդգծել կամ դուրս գրել այն , ինչ հետո կարող է պետք գալ ,սովորեցնում է , թե մեկի մասին խոսելիս կամ մեկին բնութագրելիս ինչին է պետք ուշադրություն դարձնել.

1. Մասնագիտությունը, տարիքը, սոցիալական վիճակը,

2. Մտքերը, զգացմունքները, նպատակները,

3. Շրջապատի մարդկանց վերաբերմունքը նրանց նկատմամբ,

4. Դեպքերի զարգացման արդյունքում հերոսի կրած փոփոխությունը, զարգացումը,

5. Հեղինակի և ընթերցողի վերաբերմունքը և գնահատականը:

Զարգանում է քննադատական – վերլուծական մտածողությունը, երեխաները կարողանում են մասնավորից գնալ ընդհանուրին:Գևորգի կերպարը բնութագրելու շնորհիվ երեխաները հասկանում են հասարակության կարևորությունը անհատի կյանքում, առանց հասարակական ճնշման որոշում կայացնելու կարևորությունը, սեփական հնարավորությունները ճիշտ գնահատելու և երազանքները նպատակներ դարձնելու անհրաժեշտությունը: Աշակերտները սովորում են տարբերել հեքիաթներն իրական կյանքից: Հասկանալով Գևորգի սխալները ՝ սովորում են չսխալվել. Ժողովրդական խոսքն ասում է. <<Խելոքներն ուրիշների սխալների վրա են սովորում, հիմարներն իրենց սխալների վրա էլ չեն սովորում>>:

Հարուստների կերպարները վերլուծելիս երեխաները հասկանում են անպատասխանատվությունն ու դրա հետևանքները, հասկանում են սոցիալական անհավասարության հետևանքները, համեմատում են շրջակա աշխարհը Մուրացանի ներկայացրած հասարակության հետ և հասկանում, որ սոցիալական կյանքում այնքան էլ շատ բան չի փոխվել. Նորից ունակ , բայց չունևոր մարդիկ մնում են առանց կրթության, կամ մնում են պետության և մեծահարուստների տված կրթաթոշակների հույսին, որը միշտ չի , որ տրվում է ճիշտ և բավարար չափով, մյուս կողմից էլ պետական նպաստները ի հայտ են բերում այնպիսի մարդկանց, որոնք սիրում են ապրել ուրիշի կամ պետության հաշվին, հիմա էլ ավելի է մեծացել անդունդը <<վերևի և ներքևի>> միջև:Համեմատելով անցած դարաշրջանը ներկայի հետ՝ տեսնում ենք՝ միևնույնն է,չկա արդարություն, եղբայրություն և հավասարություն, հասարակությունը հեռու է իդեալական լինելուց, կյանքում ինչ որ բանի հասնելու համար պետք է լինել խելացի, ուժեղ, համառ, պետք է պայքարել և հասնել նպատակներին:

Շիրվանզադե<<Արտիստը>>

Դասագրքում կրճատումներով զետեղված է պատմվածքը: Կենսագրության և ժամանակաշրջանի հետ ենք կապում. աքսորի տարիներ, զարգացող կապիտալիզմ, սոցիալական տարբեր մակարդակներ, գենետիկա: Նորից օգտագործում ենք Շրջված դասարանի մեթոդը, բացի դրանից, նախորդ ամռան ամառային ընթերցանության ցանկում եղել է <<Արտիստը>>. Շատերն արդեն կարդացել են այն, դիտել են ֆիլմը, որը ես չեմ խրախուսում, որովհետև սյուժեից շեղումներ կան:

Մայրենիի դասընթացից երեխաները հիշում են նկարագրություն- դիմանկար, նկարագրություն- բնանկարի դերը գեղարվեստական խոսքում, դասագրքում հենց Լևոնի նկարագրությունն է բերվել որպես օրինակ: Հիշեցնում եմ, և երեխաները թարմացնում են հիշողությունը դասագրքի հատվածի ընթերցմամբ:Պատկերավորման միջոցների լավ իմացությունը օգնում է երեխաներին հարուստ և գեղեցիկ խոսք ունենալու:1-ին դասաժամին կարդում ենք անհրաժեշտ հատվածները՝ իմ ընտրությամբ. Գտնում են և բարձրաձայն ընթերցում: Տնային աշխատանքի համար առաջարկում եմ դիպաշարի կարճ շարադրանք՝

պարզ նախադասություններով, 1-1,5 էջի սահմաններում:Հաջորդ դասին կարդում և քննարկում ենք գրածները:Այնուհետև պատումի ուսուցումը տարվում է Լևոնի /<<Արտիստը>>/ և Գևորգի /<<Հասարակաց որդեգիրը>>/ համեմատությամբ, Վենի դիագրամով գտնում ենք նրանց միջև նմանությունները և տարբերությունները.

Նմանություն- անհայրություն, տաղանդ, սոցիալական անապահովություն, աշխատասիրություն, սիրահարվածություն անհամապատասխան աղջկա, կործանում

Գևորգ-լավ ձայն, փականագործություն, նվիրված մայր, չտարբերեց աղջկա լավ վերաբերմունքը սիրուց, կործանվեց՝հավատալով հարուստների սուտ խոստումներին, դարձավ հասարակությանը անպիտան մարդ, բեռ՝ մոր ծեր ուսերին:

Լևոն-արվեստագետ, երաժիշտ, նվիրված որդի , վատ ժառանգականություն, կամազրկություն, չտարբերեց քրոջական սերը կանացի սիրուց , չդիմացավ սիրած աղջկա ամուսնության լուրին, չմտածեց մորը մենակ թողնելու մասին, ինքնասպանությամբ հեռացավ կյանքից:

Քննարկում ենք նրանց կործանման պատճառները, առաջարկում եմ տանը հորինել այլ վերջաբան: Հաջորդ դասին լսում ենք այլ վերջաբանները, քննարկում ենք դրանց իրատեսական լինելը, երեխաները սովորում են իրենց կարծիքի օգտին փաստարկներ գտնել:Դաս- բանավեճը օգնում է վերլուծական մտածողության զարգացմանը: Հանձնարարում եմ գրավոր պատասխանել դասի վերջի հարցեր և առաջադրանքներին:Ավարտում են տանը, քննարկում ենք հաջորդ դասին:

Լևոնի կերպարը վերլուծելու համար կրկին օգտագործում ենք Կերպարի վերլուծություն գծագիրը:[Տես՝4,120]: Այս անգամ երեխաները աշխատում են ինքնուրույն՝ օգտվելով դասագրքից և իրենց նախապես կատարած առաջադրանքներից: Լավագույն/ճիշտ մանրամասներով և շեշտադրումներով/ աշխատանքները կարժանանան բարձր գնահատականի, իսկ աշխատանքները կպահվեն բանավոր քննությանը պատրաստվելու համար:

Հասկանալով գլխավոր հերոսի կործանման պատճառը՝ երեխաները զգուշացվում են նուն սխալներն անելուց, վերլուծելով ուրիշների զգացմունքները՝ կարողանում են հասկանալ իրենց զգացածը,հասկանում են , թե ինչ է որդիական

պատասխանատվությունը, սովորում են ապրումակցել, լինել իրատես, գնահատել և արժևորել կյանքը, հասկանում են, որ բոլոր սխալները կյանքում ուղղելի են, անուղղելի և անդարձ է միայն մահը:

Նար – Դոս<<Եսննա>>

Նար-
Դոսիայսստեղծագործությանուսումնասիրությանշնորհիվերեխաներըառաջինանգ
ամծանոթանումենհոգեբանականանդրադարձին.
Գլխավորհերոսըփնտրումնգտնումէիրկործանմանպատճառները,
երեխաներըտեսնումեն ,
որհոգեբանականվերլուծությանշնորհիվկարելիէփնտրելվերհանելիրենցևմյուսներ
իարարքներիպատճառները, իսկպատճառըգտնելուցհետոկարելիէայնվերացնելու,
շտկելուուղիներփնտրել:

Նախորդստեղծագործություններիցայնառավելէնրանով,
որայստեղցույցէտրվումչկործանվելուճանապարհը. Ճիշտէ,
կյանքումավելիիրատեսականէկործանումը,
որովհետևմարդկանցմեծմասըչունիպաշտպանականմեխանիզմներ,
պայքարելուկամք, բայցմերխնդիրըհենցայդէ, որդաստիարակենքայնպիսիսերունդ,
որկարողէպայքարել ,
գիտի՝հանունինչիէպայքարը:Ինչպեսկազմակերպել<<Եսննա>>-իուսուցումը:
ՆորիցաշխատումենքՇրջվածդասարանմեթոդով. Գալիսեն՝կարդացած<<Եսը>>:
Ընթերցումենքիրավաբանիհնարավորություններիհատվածը,
կործանումընկարագրողհատվածները, Տ-աձևաղյուսակովցույցենքտալիսթեինչէր,
ինչդարձավ.

Նախկինում- վերջինկուրսիիրավաբան, վստահուժերին,
փառավորապագայիտենչերով,խրախուսվածերջանիկսիրով
,ավարտականդիսերտացիագրող, <<երկնքումսավառնողարծիվ>>25-ամյա,
միշտլավհագնված ,լայնաթիկունքևլայնակուրծք:

Այժմ- <<թևերըկտրածողորմելիճնճղուկ>>, կյանքիճահիճըխրվող,
հասարակականկողմանոցներումմատնագրերգրող,

զանազանմութգործերպաշտպանող,
<<միշտարբածնմիշտքնատմիաբլակատ՝այդզզվելիտիպիբոլորբացասականհատկա
նիշներով>>,այդսոսկալիանկումըլիովինզգացող,
բայցպայքարելուկամքչունեցողմարդ,
կեղտիցպլպլացողվերարկուով,մազակալածդեմքով,
արբեցողիկարմիրքթով,կուրծքըներսընկած, սապատավոր,
բերանիցէժանագինգինուևսխտորիհոտփչող:

Այնուհետև բացատրում են վերափոխության պատճառը. դժբախտ սեր, թուլակամություն:Զուգահեռներ ենք անցկացնում Գևորգի /<<Հասարակաց որդեգիրը>>/ և Լևոնի /<<Արտիստը>> /միջև: Գտնում են , որ Ես- իրավաբանի հնարավորություններն ավելի մեծ էին, կործանման պատճառները ՝ ավելի քիչ:

Նույն կերպ Շրջված դասարան մեթոդովանցնում ենք <<Նա>>-ն:Այստեղ զուգահեռներ ենք անցկացնում նաև Պետրոս Դուրյանի <<Սիրել >>բանաստեղծության հետ:Անտոնիոյի և Ջուլիետայի սիրո ծնունդը նման է ցանկացած մարդու համար սիրո զգացմունքի արթնացմանը:Հանուն սիրո մարդիկ անգամ անցնում են իրենց հպարտության վրայով:Երեխաները դերային ընթերցանությամբ կարդում են երկխոսությունները, կարդում են ամաչելով, բայց հոգու խորքում սովորում են գեղեցիկ սիրել:Նկարում կամ նկարագրում են Ջուլիետային, փորձում են տեսնել գեղեցիկը:

Վենի դիագրամով համեմատում ենք Եսին և Անտոնիոյին, գտնում ենք նմանությունները, տարբերությունները.

Նմանություններ- երիտասարդ , գեղեցիկ, սիրահարված
Ես-բուրժուազիայի ներկայացուցիչ, իրավաբան, լավ ապագայի ակնկալիքներով, կործանվում է մերժված սիրո պատճառով , թուլակամ, պարտվող

Անտոնիո-բանվոր դասակարգի ներկայացուցիչ, որբ, տաղանդավոր ջութակահար, հպարտ, համառ, ինքնասեր, պայքարող, չկոտրվող, հաղթող :

Այնուհետև ընդգծում ենք Անտոնիոյի այն հատկանիշները, որոնց շնորհիվ նա հաղթանակի հասավ, փորձում են վրեժ լուծելու ճանապարհներ ցույց տալ Եսի համար, առաջարկում են հետաքրքիր լուծումներ, կործանման պատճառների մեջ թուլակամությունից բացի ավելացնում ենք դասակարգային գործոնը- երբեք

պայքարելու առիթ չի ունեցել, միշտ ուզածը տրվել է , կյանքը եղել է բավականին հեշտ, չի ձևավորվել պայքարի կամք: Ի տարբերություն նրա ՝ Անտոնիոն միշտ պայքարել և աշխատել է ապրելու համար, հասարակ սիրային դրաման նրան ոչ թե կոտրել , այլ նրա մեջ պայքարելու կամք է ձևավորել : Դիտարկում ենք Ջուլիետայի նամակը. <<Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք , դու ՝ ներքևը: Էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ>>:Բացատրում ենք դասային անդունդի առկայությունը բոլոր ժամանակներում, երեխաները գրքերից կամ ֆիլմերից դեպքեր են հիշում անհավասար ամուսնությունների, փորձում են պատկերացնել դրանց իրատեսական լինելը:

Վերընթերցում ենք արդեն մեծ երաժիշտ դարձած Անտոնիո Բոնվինիի խոսքերը.

– Ավա՜ղ, սինյորա, ներեցեք ինձ, որ ես չլսեցի ձեզ և թեպետ այլևս չեկա ձեզ մոտ, բայց չմոռացա ձեզ, այլապես ձեր այս նամակն այսպես խնամքով չէի պահի ինձ մոտ: Սա մի անգնահատելի գանձ է, որ դուք պարգևեցիք ինձ, և այս գանձն այքիս լույսի պես կպահեմ մինչև մահս, որովհետև եթե ձեր այս նամակը չլիներ, ես թերևս այն չլինեի, ինչ որ ես եմ այժմ: Ես չմոռացա ձեզ, այո՛. բայց, ինչպես երևում է, դուք մոռացել եք այն *անդունդը*, որ մեզ բաժանում էր իրարից: Դուք *վերևն* էիք,– ես՝ *ներքևը*, և այդ ձեզ իրավունք էր տալիս արհամարհանքով նայելու դեպի ներքև: Բայց դուք հաշվի չէիք առել, որ ներքև գտնվողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև, վրիժառության զգացումով լեցուն: Այն օրը, որ դուք ձեր բարձունքից արհամարհանքով մերժեցիք ինձ – *ներքև* գտնվողիս, ես երդվեցի վրեժ առնել և, դրա համար ուրիշ միջոց գտա, բայց եթե միայն բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ինձ վրա նայող քմահաճույքն ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու: Այսօր ես հասա իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, ով տարբերություն է դնում *վերևի* և *ներքևի* միջև, ավա՜ղ, սինյորա, ես չեմ կարող:

{5, էջ 134}

Սովորողները հասկանում են , որ տաղանդը, համառությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, պայքարի կամքը , վրեժի ծարավը օգնեցին Անտոնիոյին բարձրանալ և հասնել <<անձեռակերտ բարձունքի>>: Իմ կողմից ես էլ երեխաներին բացատրում եմ, որ կյանքում հանդիպող դժվարությունների համար պետք է ուրախանալ, որովհետև դրանք մեզ ուժեղացնում են , փորձ են տալիս, սովորեցնում են պայքարել, երբեմն պարտվում ենք, երբեմն ՝ հաղթում, բայց 2 դեպքում էլ դուրս ենք գալիս ավելի ուժեղացած:Նորից հետահայաց դիտարկում ենք մեր նախորդ գրական հերոսներին, փորձում ենք հասկանալ , թե Անտոնիոյի հատկանիշներից որոնք չունեին նրանք, որ կործանվեցին, տեսնում ենք , որ դրանք զուտ անձնային հատկանիշներ էին, որովհետև և՛ Գևորգը, և Լևոնը, և Անտոնիոն նույն դասակարգի ներկայացուցիչներն էին, բայց առաջին 2-ը պարտվեցին, իսկ Անտոնիոն հաղթեց:Թույլ եմ տալիս, որ

երեխաներն իրենք դուրս բերեն հաղթանակի պատճառները և հասկանան , որ իրենք իրենց մեջ պիտի դաստիարակեն հենց այդ անձնային հատկանիշները:Եվ նորից ընդգծում ենք այն ճշմարտությունը, որ միակ անուղղելի բանը մահն է . մերժված սերը. կյանքի հարվածները կործանում են թույլ հոգեկան համակարգ ունեցողներին, իսկ ուժեղ և առողջ հոգեկան համակարգ ունեցողները չեն պարտվում, այլ պայքարում են, ավելի ուժեղանում և ի վերջո ՝ հաղթում:Կարծում եմ, որ սխալ է այն դաստիարակչական մոտեցումը, որ երեխային չի կարելի <<ոչ>> ասել, երեխան դեռ փոքրուց պիտի իմանա թույլատրելիի սահմանները:

Այսպիսով դաս առ դաս երեխաներըսովորումենաշխատելտեքստիհետ, տեսնել գեղեցիկը, մարդկայինը, առանձնացնելկարևորըերկրորդականից, գտնելպատճառահետևանքայինկապերը:Ձևավորվում է պահանջվող վերջնարդյունքը:

Հովհաննեսթումանյան

Այսթեմատիկմիավորիուսուցումըսկսումեմհամակարգչայինդասով , որտեղսահիկաշարովդիտարկումենքթումանյանիկյանքըևստեղծագործությունը, ընդհանրապես, 8-րդդասարանումեսնախատեսումեմ, որերեխաներըներկայացնենռեֆերատկամբովանդակալից և գեղեցիկսահիկաշարորևէգրողիմասին. համակարգչայինգիտելիքներըկիրառելըխրախուսվումէլավգնահատականով, խրախուսվումէնաևհամացանցումփնտրած-գտածհետաքրքիրտեղեկույթիներկայացումը:Լսումենքթումանյանիխոսքերովգրվածերգեր, <<Ախ, ինչլավեն>>և<<Ամպիտակիցջուրէգալիս>>երգերըերեխաներինսովորեցրածեմլինում 5-6-րդդասարանների<<Մայրենիի>>դասաժամերին, երեխաներընաևերգումեն. Գիտենք, որերաժշտությունըամենաարագներգործողարվեստնէ, այներեխաներինհանգստացնումէ , գրավում, ավելիբարիէդարձնում: 8-րդդասարանի<<Գրականության>>դասընթացըհարուստէերգվողբանաստեղծություններով. Կախվածերգիդժվարությունից՝կամունկնդրումենք, կամերգելենքսովորում:Երգվողբանաստեղծություններըավելիերկարևավելիլավենի

իշվում. Դրանքողջկյանքիհամարեն. Միշտհիշումեմլուսահոգիդասախոսիս՝երգիչԽորենՊալյանիխոսքերը. Երգչախմբիփորձերինիրհիվանդլինելուդեպքումնամիշտասումէր. <<Չերգել, երբբոլորըերգումեն , նմանէգրպանումհամեղկոնֆետունենալուննուտելչկարողանալուն>>: Երեխաներըսիրումենլավերգիմիջոցովընկալելուրիշներիզգացմունքները, որիրենցնենդառնումերգելիս:Իսկ ի՞նչը, եթե ոչ լավ երաժշտությունն է մարդուն դարձնում ավելի բարի, հանգիստ, կարեկից:

Թումանյանի ստեղծագործության ուսումնասիրությունն սկսում ենք <<Թմկաբերդի առումը >> պոեմից:Զույգերին տրվում է առաջադրանք՝ մտագրոհ <<լավ գործ>>, <<չար գործ>>, նույնը ամփոփում ենք գրատախտակին բոլորով:Բարին չարից տարբերելուց հետո հատվածաբար բարձրաձայն կընթերցեն պոեմը: Ուշադրություն կդարձնենք բանաստեղծական չափի փոփոխությանը, թե ինչպես է չափի, ռիթմի փոփոխությունը համապատասխանում սյուժեի ծավալմանը: Ընթերցումն ավարտելուց հետո նորից կանդրադառնանք մտագրոհի գծապատկերին, կընդգծենք այն ,ինչ ուզում էր ասել Թումանյանը:Իբրև տնային կհանձնարարվի արտահայտիչ կարդալ և պատմել դասը: Հաջորդ ժամին տրվածն ստուգելուց բացի կառաջարկվի կազմել հնգյակներ Թաթուլի, Նադիր շահի, Թմկա տիրուհու համար, լավագույնները ՝ որպես օրինակելի հնգյակ, կգրեն բոլորը, սա ևս կերպարի համառոտ բնութագիր է:Այնուհետև կքննարկենք Թմկա տիրուհուն անուն չտալու փաստը. Կլսենք երեխաների ենթադրությունները և պատճառաբանությունները: Կառաջարկեմ լսել Արտեմիսի տաճարի այրման պատմությունը, համեմատել մոռանալու ձևերը, ո՞րն էր արդյունավետ, առաջարկել մոռանալու այլ ձևեր. Սխալ պատասխաններ չկան. Եթե երեխան մտածում և առաջարկություն է անում , արդեն իսկ լավ է :Նյութը կամփոփենք անգիր հատվածի հանձնարարմամբ և ստուգմամբ:

<<Փարվանայի >> ուսուցումը ևս կսկսենք բալլադի ընթերցմամբ:Նորից կքննարկենք բանաստեղծության պատկերավորման համակարգը, Դասի վերջի հարցերին պատասխանելու միջոցով կպարզենք, թե որքանով են հասկացել բալլադի գաղափարը, իրենք ի՞նչ մոտեցումներ ունեն ,ինչպես կբացատրեն և

կհասկանան <<անշեջ հուրը>>, իրատեսակա՞ն էր, որ քաջերն ուրիշ տեղ էին փնտրում սիրո կրակը, ճի՞շտ էր, որ աղջիկը տղաներին ուղարկեց սիրո կրակի հետևից,մի՞թե այն սիրած էակից հեռու էր:Բալլադի գաղափարը բարդ է անգամ մեծահասակների համար, ինչ մնաց պատանիների, որոնք սիրո վերացական գաղափարը չեն պատկերացնում:Այնուամենայնիվ , դեռահասները կմտածեն, առաջարկներ կանեն, ես կհիշեցնեմ ռուսական հեքիաթներում տարածված առաջադրանքները<<Գնա այնտեղ, չգիտեմ ուր, բեր այն, չգիտեմ ինչը>>: Իրականում տպավորությունն այնպիսին էր, որ հերոսները չգիտեին իրենց ուզածը, բայց երեխաները, զուգահեռ անցկացնելով, կհասկանան , որ շատ հաճախ իրենք էլ չգիտեն իրենց ուզածը, որոնելը հեշտ է դառնում, երբ հասկանում ես ՝ ուզածդինչ է:

Կհանձնարարվի բերել լրացուցիչ նյութ Փարվանա լճի, բալլադի ստեղծման պատմությունից;Ապա կհանձնարարվի անգիր հատվածը և կստուգվի:

Արդյունքում երեխաները կսովորեն որոնել, գտնել , օգտվել տարբեր աղբյուրներից, արժևորել սերը, տեսնել այն ունենալու ճամփաները, մտածել նաև վերացական և համապարփակ:

Հաջորդ ստեղծագործությունը <<Հայրենիքիս հետ>> բանաստեղծությունն է. Այն ուսումնասիրվում է Մեծ եղեռնի,Թումանյանի ծավալած հայրենասիրական և հասարակական գործունեության համատեքստում: Բանաստեղծությունը Հայաստանի ճակատագրի, ժողովրդի կրած դարավոր տառապանքի, բանաստեղծի նվիրումի ու ցավի, չկոտրվող լավատեսության արտահայտությունն է :Լսում ենք նաև երգը, որ իր մի քիչ մռայլ, բայց հերոսական երաժշտությամբ համահունչ է բանաստեղծությանը, դասարանի ունակությունից և տրամադրվածությունից ելնելով ՝ կարելի է կազմակերպել երգով ուսուցում:Բանաստեղծությունը հանձնարարվում է վերաշարադրել արձակ, ապա պատմել , որովհետև քննական հարց է: Իբրև արտադասարանային ընթերցանություն, գրքում է նաև <<Հոգեհանգիստ >>բանաստեղծությունը. Ինքնուրույն կարդալ եմ հանձնարարում և տալիս եմ առաջադրանք . բերել լրացուցիչ նյութ բանաստեղծության մեջ օգտագործված տեղանունների մասին:Սրա շնորհիվ երեխաները սովորում են Հայկական լեռնաշխարհի գետերի, լճերի, լեռների մասին լրացուցիչ նյութ:Բացատրում ենք, թե ինչու է բանաստեղծությունը վերնագրված

<<Հոգեհանգիստ>>, ինչ արարողություն է դա, ինչու է Թումանյանը կազմակերպում գրական հոգեհանգիստ:Ողբերգության մեծությունը թույլ չի տալիս սգալ հատ-հատ, հայոց վշտի ծովի համար պետք է սգալ համապարփակ , որը և դառնում է գրական գլուխգործոց՝<<Հոգեհանգիստ>>:Ապա շաղկապում ենք վերջին2 բանա-ստեղծությունը և գրում ենք Կենսագրական բանաստեղծություն Թումանյանի ՝ ամենայն հայոց բանաստեղծի մասին: Սրանով բացահայտվում է մեծ մտածողի, հայրենասեր մարդու և նվիրված որդու կերպարը:Սա բոլոր ժամանակների համար իդեալական քաղաքացին է՝ հայրենիքի նվիրյալը:

Թումանյանի քառյակների ուսուցումը ևս զարգացնում է վերացական և համապարփակ մտածողություն. Ամեն քառյակի վերաբերյալ երեխաները հնչեցնում են կարծիքներ, իրենց պատկերացրածը,սովորում են քառյակի զարգացման պատմությունը, շատ անգիրներ. 5-ը ՝ իմ ընտրությամբ, 5-ը՝ իրենց:Գեղեցիկ անգիրների իմացությունը բեռ չէ, այլ պարգև. Կյանքի ցանկացած հանգամանքում դրանք վերհիշելը, դիպուկ մեջբերումը սովորողին տալիս է գեղեցիկ, հարուստ խոսք:Այսպիսով ՝ Թումանյանի կերպարը՝ իբրև մարդու, հոր, քաղաքացու, հասարակական գործչի, ոգևորում և դաստիարակում է երեխաներին. Նրանք հասկանում են , թե ինչ է հայրենիքի նվիրյալը, որքան լավ է նման հայր ունենալը և լինելը, գեղեցիկ գրականությունը կրթում է երեխաների միտքը, զարգացնում մտածողությունը:Այցելությունը Թումանյանի թանգարաններ խրախուսում է ճանաչողական հետաքրքրասիրությունը,լայնացնում մտահորիզոնը. միջին դպրոցում դրանց այցելությունն անպայման է :

Ավ. Իսահակյան

Ավետիք Իսահակյանի մասին ևս կարելի է գաղափար տալ հարուստ սահիկաշարով, միաժամանակ երեխաներին սովորեցնում ենք , որ Թումանյանն ու Իսահակյանը հայ գրականության 2 ուղղությունների հիմնադիրներն են . Թումանյանը ՝ ազգայինի, Իսահակյանը ՝ համամարդկայինի:Իսահակյանի դերը մեծ է նաև նրանով , որ գրական սերունդների խզված կապը նա էր՝իր երկարակյացությամբ և ստեղծագործական շաղկապվածությամբ և՛հնին, և՛ նորին:

Իսահակյանի ստեղծագործությամբ երեխաները ճանաչում են համամարդկային արժեքները գեղեցիկի, վեհի, սիրո, կյանքի հավերժական շրջապտույտի, կորստի և կարոտի:

Իսահակյանը մտածում և ստեղծագործում է իբրև աշխարհաքաղաքացի, այնինչ Թումանյանի մտածողությունն ու մոտեցումները խորապես ազգային էին. Գուցե դա նրանից էր, որ Իսահակյանը շատ է ապրել Եվրոպայում, ձեռք է բերել ավելի ազատ և համապարփակ մտածողություն:Երեխաներն իրենք էլ վերջում կարող են կարծիքներ հայտնել ստեղծագործության առանձնահատկությունների պատճառների մասին:

<<Մի մրահոն աղջիկ տեսա >> բանաստեղծությունը լուսավոր պատկեր – ապրում է սիրո և տառապանքի. Այն, ինչ ժամանակին ուժեղ ցավեցրել է բանաստեղծին, հիմա դարձել է հիշողություն և փորձ: Դիտարկում ենք բանաստեղծության պատկերավորման համակարգը ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն. Խորհրդավորությունը համեմատում ենք Լեոնարդո դա Վինչիի <<Մոնա Լիզա>> կտավի հետ, որոնում և գտնում են հետաքրքիր նյութեր կտավի մասին, բանաստեղծության մեջ հիշատակված <<մրահոն կույսի>>մասին:Խրախուսվում է երեխաների ճանաչողական հետաքրքրությունը:

<<Ռավեննայում >>բանաստեղծությունը հավերժական արժեքների մասին է, որտեղ Իսահակյանը վերադառնում է հայկական արմատներին. Այստեղ կյանքի անցողիկության կողքին բանաստեղծը տեսնում է հավերժական և անմեռ արժեք ՝ Արարատը, փոխաբերական պատկերի միջոցով Իսահակյանը Հայաստանի և հայ ժողովրդի անմահության գաղափարն է արծարծում: 2 բանաստեղծությունն էլ քննական անգիրներ են, այսինքն երեխաները իրենց իմացական դաշտը հարստացնում են գրական գոհարներով:

<<Հավերժական սերը >> լեգենդը սիրո և հավատարմության մասին գեղեցկագույն ստեղծագործություններից մեկն է:Եթե <<Փարվանայի>>քաջերը չգիտեին, թե կոնկրետ ինչ են որոնում, ապա Թադմորի արքան գիտի , թե ինչ է կորցնում , և նրա կորստի ցավը մեծ է, մեծ է և ցավից ծնվող հուսահատությունը: Երեխաները տեսնում են բնության և մարդու կատարյալ գեղեցկությունը և մեծագույն անարդարությունը ՝ գեղեցիկի անժամանակ մահը:Եթե չլինի ցավը, մեծ

չի լինի համարժեք ուրախությունը. Վերհիշում ենք Նար – Դոսի <<Ես և նա>>-ից այն տողերը, երբ <<Ես>>-ի հերոսն ասում է.

Ամեն անգամ, որ նայում էի նրա զարմանալի պայծառ աչքերին, որոնց մեջ կարծես արևն էր վառվում, ամեն անգամ, որ լսում էի նրա կենսաթրթիռ ծիծաղը, որի մեջ կարծես գարնանային չարաճճի վտակ էր քչքչում, ամեն անգամ, որ առնում էի նրան գիրկս և ականջիս մոտ լսում նրա կուսական կրծքի հնքը, այտերիս վրա զգում նրա թավիշ-մազերի էլեկտրականացնող շփումը – ինձ տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցության տակ պատրաստ էի գործել և ամենամեծ առաքինությունը, և ամենամեծ ոճիրը – միայն թե նա հրամայեր: {5,126}

Երեխաները փորձում են հասկանալ սիրո կախարդիչ զորությունը. Չէ՞ որ աշխարհը շարժող ուժերը 2-ն են՝Սերը և Ատելությունը. Առայժմ ոչ մի հույս չկա, որ կթևածի համատարած սերը, ուրեմն երեխաներին պետք է նաև ատել սովորել , զարգացնել ինքնապահպանման բնազդ: Մարդկային մնացած բոլոր զգացումները ենթարկվում և ստորադասվում են վերոհիշյալ 2-ին, ծնվում են նրանցից :

Նույն համամարդկային գաղափարներն են արտահայտված նաև <<Սաադիի վերջին գարունը>> ստեղծագործության մեջ. Իզուր չէ, որ այն կոչվում է արձակ բանաստեղծություն. Պատկերավորման միջոցների առատությունը, ճոխ ու շռայլ լեզուն երեխաներին տալիս է գեղեցիկ բառապաշար և հարուստ խոսք: Այս ստեղծագործության ուսուցման վերջնարդյունքում երեխաները հասկանում են , որ կյանքը պարգև է, որից չի կարելի հրաժարվել , այն չի կարելի մսխել, վատնել դատարկ բաների վրա, որովհետև վերջանում է մի գիշերվա երազի պես.այս միտքը բյուրեղանում և դառնում է հավերժական ճշմարտություն .<<Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով>>{5,180}

ԳրիգորԶոհրապ

ԱպաարևմտահայհեղինակներիցծանոթանումենքԳրիգորԶոհրապիկյանքին և ստեղծագործությանը:Զոհրապի կյանքը , հասարակական գործունեությունը, ստեղծագործությունը, անգամ մահը ուսուցանող և դաստիարակիչ են: Ինչպես Թումանյանն արևելահայ իրականության մեջ, այնպես էլ Զոհրապն արևմտահայ իրականության մեջ վճռորոշ դեր է կատարել հասարակական և գրական կյանքում: Լինելով թուրքական պառլամենտի պատգամավոր՝ նա արել է հնարավոր ամեն բան՝ իր ժողովրդին արհավիրքից փրկելու համար, իսկ երբ ջանքերն անցել են ընդունայն, մնացել է իր ժողովրդի հետ և ընդունել հարվածը.,<…որու՞ թողում այս անտեր ժողո-

վուրդը: Չէ՛, փախչիլ չեմ կրնար, պետք է , պարտքս է մինչև վերջը պատնեշին վրա կենալս >>{6,IX} : Երեխաներին անպայման պատմում եմ նրա՝ իբրև փաստաբանի, գործունեության մասին , աքսորի ճանապարհին առաջարկված փախուստի բազ-մաթիվ առաջարկների մասին, կարդում ենք նրա վերջին նամակները կնոջը ՝ Կլարային, Խորհուրդ եմ տալիս կարդալ Պերճ Զեյթունցյանի <<Վերջին արևագալը>> վեպը ՝ իբրև Զոհրապի կենսագրական և մյուս եղեռնազարկ գրողների վերջին օրերի պատմություն: Այսպիսով ՝ ստեղծվում է օրինակելի մտավորականության կերպարը, որը ոգեշնչում է և առաջնորդում, երեխաները տոգորվում են հայրենասիրությամբ և անձնվիրությամբ ՝առ հայրենիք:

Զոհրապի ստեղծագործություններից դասագրքում տեղ է գտել <<Այրին >> նորա-վեպը:Կենսագրությունից երեխաներն արդեն գիտեն , որ Զոհրապին կոչել են <<նորավեպի իշխան>>. Սա նշանակում է, որ նա իր գործի անգերազանցելի վարպետն էր:Նախ բացատրում ենք պատմվածքի և նորավեպի տարբերությունը, ապա խնդիր է առաջանում արևմտահայերենի պատնեշը հաղթահարելու:Այստեղմերգործըբավականինբարդանումէ, որովհետևփոքրածավալչափածոգործերիցանցումէկատարվումնովելին, որըթարգմանելուևհասկանալուհամարավելիբարդէ: Այստեղ Շրջված դասարանի մեթոդը չի աշխատում, որովհետև պետք է ամբողջ նովելը հատվածաբար կարդալ և հասկանալ երեխաների հետ: Սա միակ ճանապարհն է ամբողջ դասարանին նյութը հասանելի դարձնելու:Նովելնընթերցելուցառաջեսհանձնարարումեմկարդալէջ 195-196-իցնորավեպիբովանդակությունը : Որպեսզիկարդանևհասկանանիրենցհամարմեծստեղծագործությունը, նախպետքէիմանան , թեինչիմասինէկարդալիքնյութը, այդժամանականգամանձանոթբառերըմոտավորապեսպարզենդառնում , նաշակերտըհիմնականումհասկանումէկարդացածը:Այնուհետև առաջարկում եմ մտագրոհ՝ Պանդխտություն: Գրում ենք երեխաների ասած բոլոր մտքերը, քննարկում ենք երևույթի պատճառները անցյալում և հիմա. Այսօր էլ արտագնա աշխատանքը տարածված երևույթ է, այսօր էլ դրա պատճառով ընտանիքներ են քանդվում, դժբախտանում են կանայք:Պանդխտության երևույթի հասկացումը, հասարակության հիմքերի խարխլումը քանդվող ընտանիքների պատճառով այս դասի հետ կապված

առաջին կարևոր գործն են:Նորավեպը հատվածաբար ընթերցելուց, թարգմանելուց , դեպքերի հաջորդականությունը հասկանալուց հետո քննարկում ենք հին ժամանակ-ներում ամուսնության հարցը . ի հայտ է գալիս դեպքերի պատճառը. եթե Մարտի-րոսն ու Զարդարը իրար ավելի լավ ճանաչած լինեին, սիրած լինեին իրար, ավելի ջերմ հարաբերություններ ունենային, Մարտիրոսն էլ Խաչոյի նման կձգտեր վերադառնալու: Եթե Մարտիրոսի աշխատանքն այդքան թեթև չլիներ, քաղաքի բարոյական ազդեցությունն այդքան մեծ չլիներ, սիրեր և երազեր իր կնոջ մասին , ապա բարոյական անկում չէր լինի , ընտանեկան սրբությունները չէին մոռացվի, ոտնահարվի: Էլի մի անգամ երեխաները կքննարկեն կնոջ իրավունքների հարցը, նահապետական բարքերի ճնշող ազդեցությունը երիտասարդ ընտանիքի կայացման հարցում: Այսօրվա Հայաստանում ևս առկա է նույն խնդիրը, երեխաներից շատերն իրենց կաշվի վրա են զգում <<հավերժ բացակա>> հոր գոյությունը, նրանց մեջ կան նաև այնպիսիք, որոնց հայրերն արդեն հեռվում նոր ընտանիք ունեն և չեն վերադառնա: Լավագույն դեպքում դրանք մի քանի ամսով հյուր եկող կամ մի քանի ամսով երեխաներին տանող հայրերր են: Սա զգուշացնում է երեխաներին ապագայում նման քայլի չգնալու: Ամուր հասարակություն ունենալու հիմքը ամուր ընտանիքներն են. Այս գաղափարը հատկապես Մուրացանի մոտ շատ է արծարծվել:<<Այրին>>նորավեպը դաստիարակում է բարոյականություն և պատասխանա-տվություն, Զոհրապի կենսագրությունը ևս , գումարած նաև մեծ հայրենասիրություն:

ԴանիելՎարուժան

Հաջորդ հեղինակը ևս արևմտահայ է, ևս եղեռնիզոհ, այնպես որ մեր աշխատանքըշարունակական բնույթ է կրում:ՃակատագրիչարխաղովերկուհատվածիբաժանվածՀայաստանումաշխարհաբ արըզարգացավևձևավորվեցերկուճյուղով՝արևմտահայերենևարևելահայերեն : Երկուտարբերբարբառներիհիմանվրաձևավորվածլեզուներնէլհասանզարգացմանբա րձրմակարդակի, երկուսովէլկերտվեցհոյակապգրականություն, որնայսօրդպրոցականդասագրքերիմիջոցովավանդվումէմատաղսերնդին: Ցեղասպանությունիցհետոարևմտահայգրականությունըշարունակեցզարգանալսփյու ռքում, որովհետևլեզվիկրողներըսփռվեցինաշխարհովմեկ :

Ձևավորվեցսփյուռքահայգրականությունը,
որըևսներառվածէդպրոցականդասագրքերում/ավագդպրոց/:

Արևմտահայերենըհայժողովրդիլեզվամշակույթիանբաժանելիմասնէ, բացառիկ կարևորությանազգայինարժեք,
ցեղասպանվածժողովրդիբեկորներիշնորհիվմեծագույնաղետիցփրկվածգանձ,
որը,թեևզրկվածէգործառությանբնականոնպայմաններից,
սակայնհաղորդակցմանմիջոցլինելուցբացիձեռքէբերելնաևհամազգայինշանակությունունունեցողայլգործառույթներ:
ԱրևմտահայերենըոչմիայնազգապահպանդերունիՍփյուռքում,
այլնաևապահովումէՀայաստանիՀանրապետությանլեզվականներկայությունըաշխարհիբազմաթիվերկրներում,
կատարումէլեզվականդեսպանիյուրահատուկդեր՝հնարավորությունստեղծելովաշխարհումճանաչելիդարձնելմերմշակույթը, ազգայինինքնատիպությունը:
Այսառումով՝խնդիրըոչմիայնհամազգային, այլնաևպետականկարևորությունունի:
Այսօրմերհանրապետությանապագաքաղաքացիներըարևմտահայերենինծանոթանալուայլմիջոցչունեն ,
քանդպրոցումնախատեսվածծրագրայինգրականությանըծանոթանալը ,
բնագրայինընթերցա-
նությանմիջոցովարևմտահայերենիևարևելահայերենիտարբերություններինննմանությունններինտիրապետելը:Մեծէայսօրդպրոցումգրականությանևհայգրականությանդասընթացներիդերը, քանիորնրանքենարևմտահայերեննուարևելահայերենը, սփյուռքնուհայրենիքըիրարմիացնողկամուրջը:

ԴանիելՎարուժանինմենքուսումնասիրումենքեղեռնիհամատեքստում: Նորից հիշում եմ Պերճ Զեյթունցյանի <<Վերջին արևագալը>>, պատմում եմ Վարուժանի սիրո և ամուսնության պատմությունը, ներկայացնում եմ նրան ՝ ոչ միայն իբրև գիտուն հայրենասեր այրի, այլև իբրև սիրող և հավատարիմ ամուսնու:Վարուժանիցուսումնասիրությանենթակաեն<<Ցորյանիծովեր>>, <<Ձոն>>, <<Նավասարդյան>>,բանաստեղծությունները:<<Ձոնը>> ուսումնասիրում ենք սահիկաշարով, որտեղ գունային ընդգծումներով ցույց եմ տալիս բանաստեղծության

կառուցվածքը ՝ վեցատողեր, կրկնվող տողեր, կրկներգ ՝ բառի փոփոխությամբ:Այնուհետև բովանդակային հարցերին ենք անդրադառնում և քննարկում ենք Վարուժան- հայրենասերին: Յուրօրինակ է նաև Վարուժանի տված հայրենասիրության դասը: Այստեղ ես միշտ հիշեցնում եմ մյուս եղեռնազարկ բանաստեղծի ՝ Սիամանթոյի բանաստեղծությունը ՝ <<Ես երգելով կուզեմ մեռնիլ>>, այստեղ քաջամարտիկը բանաստեղծին հրաժեշտ տալիս խնդրում է իրեն մի հերոսական երգ տալ , որովհետև հայրենյաց կռվում ինքը երգելով է ուզում մեռնել: Սա նաև հիմք է հետո ավագ դպրոցում Շահնուր ուսումնասիրելու համար, որովհետև <<Նահանջը առանց երգի>> պարտության մասին է. կարելի է կռվել ու մեռնել երգով, բայց նահանջել երգով ՝ոչ:Այս բանաստեղծությամբ Վարուժանը իր հոգու միջով ՝ իբրև <<եղեգան փողի>>է անցկացնում հայ ժողովրդի ողջ պատմությունը ՝ փառքերով , կորուստ-ներով, ողբերգությամբ, հերոսական դրվագներով: Երեխաները հասկանում են , որ հայրենիքի հետ կապված ամեն ինչ ազդում է հայրենասեր մարդու և քաղաքացու վրա, չի կարելի երջանիկ լինել, երբ հայրենիքը հեծում է և կորուստներ տալիս:Լսում ենք <<Զոնը>> երգը, ժամանակ լինելու դեպքում կունկնդրենք նաև Ռոբերտ Ամիրխանյանի <<Երազ իմ երկիր >>երգը: <<Զոն>>բանաստեղծությունը քննական անգիր է, ուշադրություն եմ դարձնում նաև արտասանության արտահայտ-չականությանը:

Որքանէլորհայրենասիրականէ<<Նավասարդյան>>տաղիբովանդակությունը, որքանէլորվառէարտահայտվածՎարուժանիտաղանդնայդերգում, եսկարծումեմ , որայնչպետքէզետեղվեր ութերորդիդասագրքումլոկ**ծիծեր**բառիառկայությանպատճառով:Տասնչորս տարեկանհասունացողպատանիներիհամարդանմանէցուլիդեմպահվողկարմիրկտորի: Երբևէմտածե՞լեքուսուցչիմասին , որըուսուցանումէայդբանաստեղծությունըառնվազնթաքնվածծիծաղի, առավելագույնը՝լկտիհռհռոցիկամակնարկներիպայմաններում: Եթեանգամուսուցիչնանցնումմեկնաբանումէբանաստեղծությունը, ապաաշակերտներըչենկարդումայդբառը/ դալավագույնվիճակնէ/, ենթարկումենտաղրգրաքննության:Այսստեղծագործությունննանցնելիսհատկապեսբացատրությանկարիքունենմեծատառովգրվածհասկացությունները՝Ույժ, Սեր, Սերմ,

Ցեղ, Զավակներ, Արշալույս: Կարծում եմ, որ ութերորդ դասարանում այս բանաստեղծության տված վնասն ավելի մեծ է ,քան օգուտը:Բացատրումենք, որ<<Հեթանոսերգերը>>փառաբանումէրհեթանոսականժամանակներիհերոսական, վեհարժեքները, այդհասկացություններըառանձնահատուկիմաստունշանակությունունեինՎարուժանիհամար:Նմանդեպքերումսովորական, հասարականուններնստանումենհատուկնշանակությունգրվումենմեծատառով, դրանքարտահայտումենհեղինակիսուբյեկտիվվերաբերմունքը:

<<Ցորյանիծովեր>> անցնելիս նորից խոսում ենք հետմահու հրատարակված <Հացին երգը>> ժողովածուի մասին, դրա հրատարակման գործում Վարուժանի կնոջ՝ Արաքսիի դերի և հավատարմության մասին: Էլի մի անգամ ընդգծում ենք սիրո և հավատարմության դերը ամուսնական հարաբերություններում:Բանաստեղծության պատկերավորման համակարգի դիտարկումը կրկին հարստացնում է երեխաների երևակայությունը և բառապաշարը;

<Ցորյանիծովեր>բանաստեղծությունըանցնելիսբացատրումենք նաև սահմանականներկայիկազմությունը, Տ-աձևաղյուսակովբացատրումենքդրանցզուգաձևությունները.

Կանցնին- անցնումեն,կ'արթննան- արթնանումեն ,կըհոսի- հոսումէ, կ'հորդի- հորդումէ, կըկատղի- կատաղումէ, կըպատռին- պատռվումեն, կըկարվին- կարվումեն, կ'ալեծփին- ալիքվումեն , կըծփա- ծփումէ, կ'երգե- երգումէ:

Արևմտահայերենի քերականական տարրերի իմացությունը օգնում է լեզուն հասկանալուն և սիրելուն. Չմոռանանք, որ դպրոցն է կամրջում մեր երկու գրական լեզուները:

ՄիսաքՄեծարենց

Ի՞նչ է տալիս երեխային Մեծարենցի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությունը: Նախ՝ երեխաները մեկ անգամ ևս սովորում են գնահատել կյանքը, չչարանալ, սիրել բնությունը, ապրել նրա գեղեցկությամբ, գեղեցկության և երջանկության փոքրիկ պահերից ուժ հավաքել՝ կյանքի դժվարությունները հաղթահարելու համար:Վաղամեռիկ Մեծարենցի ստեղծագործության մեջ չկա

ատելության, կամ բողոքի նշույլ. Նրա ստեղծագործությունը միայն հիացում է, ձուլում բնության գեղեցկությանը, ամեն պահ նա ապրում է շնորհակալությամբ ու սիրով ՝ առ բնությունը, մարդը, առ Աստված:Մեծարենցի ստեղծագործությունը սովորեցնում է այլասիրություն: Մեծարենցի շատ բանաստեղծություններ երգի են վերածվել, երգը, հատկապես լավ երգը, օգնում է երեխաներին հասկանալ բանաստեղծության ապրումները, բարիանալ կամ հերոսանալ, լցվել կյանքի էներգիայով, դաստիարակում է գեղագիտական ճաշակ, օգնում է աշխարհն ու կյանքը ընկալել իբրև երգ:<<Երազ օրեր>>, <<Սիրերգ>>, <<Աքասիաներուն շուքին տակ>>, <<Հյուղը>><<Զմրան պարզ գիշերը>> բանաստեղծական գոհարներ են ՝ հոգին շոյող, միտքը, զգացողությունները մեղմացնող. Բանաստեղծական պատկերն ավելի լավ ընկալելու համար օգտագործում եմ Քառաբաժան, Կրկնակի գրառումների օրագիր մեթոդները, ունկնդրում և երգում ենք երգերը:Երեխաները հասկանում են որ կարևորը ապրած տարիների որակն է , ոչ թե քանակը, և գոհունակությունը ոչ թե ունեցածի չափից է կախված, այլ մարդկային որակ է ՝ ի ծնե տրվող:Մեծարենցի ստեղծագործությունը մեծացնում է սերը դեպի արևմտահայերենը:

ՎահանՏերյան

Տերյանի ստեղծագործությունն ու կյանքը ուսումնասիրվում է քաղաքական և հեղափոխական փոփոխությունների համատեքստում. Տերյանը հայրենասեր հայ է, հեղափոխական, նորարար ոչ միայն բանաստեղծության մեջ , այլև կյանքում: Մեծ է նրա դերը հայ գրականության թարգմանության և տարածման գործում , նա փորձել է ի շահ հայրենիքի ծառայեցնել բոլշևիկյան գաղափարները, կազմակերպել և տեղ հասցնել հալածված և տեղահանված ժողովրդի համար օգնությունը: Միաժամանակ նա նուրբ և զգայուն հոգի ունի : Երեխաները հետաքրքրությամբ են դիտում Տերյանի մասին ֆիլմը/https://www.youtube.com/watch?v=t2ZgUQJOBGA/, սահիկաշարերը, սիրում , կարդում և անգիր են սովորում հանձնարարվող բանաստեղծությունները:Կենսագրական բանաստեղծությամբ ի մի ենք բերում Տերյանի մասին տեղեկությունները, նրա ապրումները, երազանքները, ձգտումները, նպատակները, աշխարհին տվածը:Կարդում, քննարկում, ապրումակցում ենք նրա բանաստեղծություններին, տրամադրությանը՝ <<Տխրություն>>, <<Իմ խաղաղ

երեկոն>>, <<Երկիր Նաիրի>>,<<Հրաժեշտի գազել>>:Լսում ենք Տերյանի խոսքերով բանաստեղծություններ, սովորում ենք երգեր:Միաժամանակ ճանաչում են բանաստեղծական կառուցվածքի նոր ձևեր ՝ գազել, սոնետ, տրիոլետ, զարգանում է գրականագիտական իմացությունը:Դասընթացի հայ գրողների մեծ մասը հայտնի են նաև իրենց ազգանվեր գործունեությամբ. Դա չի կարող իր կնիքը չթողնել դեռահասների մտքի և հոգեբանության վրա:

Էռնեստ Հեմինգուեյ<<Ծերունին և ծովը>>

Արդեն ասել եմ , որ ամեն դասագրքի վերջին հեղինակը համաշխարհային գրականության նշանավոր դեմք է ՝ որևէ հայտնի գործից հատվածով:Մարդու արժանապատվության և արիության հիմնահարցը միշտ եղել է Հեմինգուեյի ստեղծագործության առարկան: Հեմինգուեյը ներկայացրել է այն , ինչ համամարդկային նշանակություն ունի՝պատերազմների աղետալի հետևանքները սերունդների համար, մարդու և բնության ուժերի պայքարը, քաղաքացիական պատերազմները, մինչ 2-րդ համաշխարհային պատերազմը նա արդեն նախազգուշացնում էր դրա աղետալի հետևանքների մասին: Մասնակցելով 2-րդ համաշխարհայինին իբրև զինվորական թղթակից՝ նա տեսավ մարդկային երազանքների կորուստը, պատերազմի կործանիչ հետևանքները:Նրա ստեղծագործության հետ է կապվում <<Կորուսյալ սերունդի >>գաղափարը: Անպայման կենտրոնանում ենք կենսագրության այն հատվածի վրա , որտեղպատմում է <<մեր ժամանակներում >>/1930/պատմվածքների ժողովածուում <<Զմյուռնիայի նավահանգստում>> նախաբանի մասին , որտեղ նա պատմում է 1922-ին թուրքերի կողմից հայերի և հույների կոտորածների մասին : Ներկայացնելով Հեմինգուեյին ՝ իբրև մարդկության բոլոր ցավերի կրող՝ որոշակի արդարացում ենք գտնում նրա՝ ինքնասպանությամբ կյանքին վերջ տալու փաստին:<<Մարդուն կարելի է սպանել, բայց չի կարելի հաղթել>> միտքը <<Ծերունին և ծովը >>գործից իր ուրույն բացատրությունն է ստանում Հեմինգուեյի ինքնասպանությամբ: Երեխաները դեռ փոքր են ՝ Հեմինգուեյի ողբերգության լիովին ընկալման համար, դրա համար մենք կենտրոնանում ենք դրականի վրա: Շրջված դասարան մեթոդով հանձնարարվում է դասը կարդացած գալ, այնուհետև

մանրամասն աշխատում ենք դետալների վրա: Բառապաշարը հարստացնելու համար տալիս եմ բառ- թելադրություն ՝ծովի հետ կապված բառերի յուրացման նպատակով. Մենք՝ հայերս ցամաքային ժողովուրդ ենք, այն , ինչ հասկանալի է ծովին, նավի հետ առնչվող ժողովուրդներին, մեզ համար միայն գրքային ուսումնասիրության առարկա է : Օգնության է գալիս համացանցը, որտեղ երեխաները կարող են դետալներով գտնել և տեսնել իրենց անհայտ նավամասերը:Մեծանում է տեղեկատվական դաշտը, երեխաները ձեռք են բերում որոնողական հմտություններ: Ծերունու կերպարի վերլուծությունը ՝Կենսագրական բանաստեղծությամբ , ամբողջացնում է մարդու ՝պայքարող և չնահանջող անհատի կատարելատիպը:

Եզրակացություն

Այսպիսով , ութերորդի դասագրքի քննարկման միջոցով մենք տեսանք, թե որքան կարևոր է <<Գրականություն >> առարկայի դերը դպրոցական դասընթացում:Եթե մյուս առարկաները կրթում են երեխայի միտքը, ապա<<Գրականությունը >> կրթում է մարդու հոգին, դաստիարակում է զգացմունքները: Հեղինակների կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությամբ, գրական ստեղծագործությունների ընթերցմամբ, կերպարների վերլուծությամբ, պատկերավորման միջոցների ուսումնասիրությամբ դեռահասները սովորում են զգալ, մտածել, գտնել, արժևորել ,ստեղծել և ստեղծագործել, օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաներից, ձևակերպել մտքերը բանավոր և գրավոր: Վերջնարդյունքում մենք ունենում ենք հասարակության պատասխանատու քաղաքացի , գիտակից և արժամապատիվ անհատ, հայրենասեր մարդ, որը հարգում է իրեն և ուրիշներին, կարողանում է որազանքները դարձնել նպատակ և հասնել դրան:Ուսուցչից է կախված, թե երեխան որքանով կսիրի և կարժևորի առարկան, որքան գիտուն, որոնող, հետաքրքրասիրություն առաջացնող, նախաձեռնությունը խրախուսող , բազմակողմանի զարգացած և հետաքրքիր մարդ է ուսուցիչը, այնքան մեծ է սերը առարկայի նկատմամբ և առարկայի տված օգուտը սովորողին: Սիրենք մեր գործը, սիրենք երեխային, օգտագործենք նոր և

ավանդական մեթոդները `կրթելու երեխայի միտքը, հոգին, զգացմունքները, և աշխատանքը մեզ կպարգևի բերկրանք և ուժ ` նոր նախաձեռնությունների:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կրթությանպետականչափորոշիչ
2. Ա. Ս. Մակարենկո, «Միքանիհետևությունիմմանկավարժականփորձից»
3. Վիքիպեդիա https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B6%D5%BF%D5%B8%D5%B6_%D5%84%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A5%D5%B6%D5%AF%D5%B8#%D4%B3%D5%AB%D6%80%D6%84_%D5%AE%D5%B6%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80
4. համացանց https://blognews.am/arm/news/132877/20-imastun-asuyt-grakanutyan-masin.html
5. Զ. Մ. ԳրիգորյանՀԱՅԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ(10-12 ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ԸՆԴՀԱՆՈՒՐԵՎԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆՀՈՍՔԵՐՈՒՍՈՒՑՉԻՉԵՌՆԱՐԿ էջ 120/

6. Դ. Գասպարյան 8-րդ դասարան<<Գրականություն>>https://fliphtml5.com/fumf/uybc
7. Գրիգոր Զոհրապ Երկերի ժողովածու , հ. 1 1962թ.